ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԱՊՁԲ-7/9-2

ք. Երևան **04-ը փետրվարի 2015թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով(այսուհետև՝ Պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ սույն պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրերով նախատեսված վերնաշապիկներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար/Հավելված N3/:

1.2 Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Ընդ որում Վաճառողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Վաճառողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում՝ ընդ որում ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանի լուծվում է: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարիներին՝ 2015-2017թթ. ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը կլուծվի:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով, ժամկետներում և վայրում՝ ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա՝ ք. Երևան:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված պայմաններին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսականու վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսականուն համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.4 Սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.5 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին (Ստացողին) հանձնել Ապրանքը՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.5 Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.6 Գնորդին (Ստացողին) հանձնել սույն Պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված տեսականու և որակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.7 Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից սույն պայմանագրի 3.2.3 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.4.11 Յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից 24 ժամ առաջ <pndepartament@mail.ru> էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել Գնորդին՝ պայմանագրի ծածկագրի, մատակարարվող ապրանքի անվանման, քանակի և վայրի մասին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածում, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 46 728 000 /քառասունվեց միլիոն յոթ հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում /Հավելված N3/ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում, վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրով սահմանված վճարման ժամանակացույցով:

4.3 Սույն պայմանագրով Ապրանքի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի և պայմանագրի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին կամ Ստացողին՝ Գնորդի ներկայացուցչի մասնակցությամբ, Պայմանագրով նշված ծավալներով և ժամկետներում:

6.1.1 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում, Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ/Հավելված N4/:

6.2 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում, Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.3 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու(հաստատվելու) պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայամանգրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետրի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ. դեկտեմբերի 30-ը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

9.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.3 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Վաճառողին հաղթող ճանաչելու(ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծարման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝

երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի, ընդ որում պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհարժեշտ է ձեռքբերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը, ինչպես նաև ՀՀ կառավարության № 168 Ն-որոշման 67-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան բսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը 31.10.2011թ. № ՊՆ 510-1354 գրությամբ նախապես համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

9.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 Հավելվածները՝ բաղկացած են 3 թերթից, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.9 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ
Ն. ԵՂԻԱԶԱՐԲԵԿՅԱՆ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ԲԲԸ
ք.Երևան, Ձ.Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554
Տնօրեն Ն. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1

N ՇՀԱՊՁԲ-7/9-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ***Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ*** **(հատ)** Պետք է արտադրված լինի 82007, 82039 արտիկուլի սև գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Կոճակները ջերմակայուն(չհալող) պլաստմասայից կտորի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողմասերը էլաստիկ ժապավենով ձգված: Կոկետկայի ներքևի եզրով և կրծքամասի գրպանների կափույրերի վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Բազկակալների վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ, իսկ մնացածը 11մմ երկու անցքով եև գույնի ջերմակայուն պլաստմասայից:

Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

2. ***Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի ՌՈ*****(հատ)** ***ГОСТ*** 19867-93: Պետք է արտադրված լինի 82007, 82039 արտիկուլի սև գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտաձող: Մեջքը կոկետկայով՝ կոկետկայի, կրծքամասի գրպանների և թևքերի մանժետի վերին եզրերը մշակված է կարմիր երիզով, ուղիղ գոտիով, կողմասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից՝ կտորի գույնի: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ --եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

3. ***Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ ՌՌ*** **(հատ)** - Պետք է արտադրված լինի 82007, 82039 արտիկուլի սպիտակ գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Կոճակները ջերմակայուն(չհալող) պլաստմասայից կտորի գույնի: Մեջքը կոկետկայով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Կոկետկայի ներքևի եզրով և կրծքամասի գրպանների կապույրերի վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Բազկակալների վերին եզրերով անցկացված են 1.5-2 մմ լայնության կարմիր գույնի երիզներ: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում երկու կամրջակներ և երեք փակօղակներ: Գրպանների կափույրների և բազկակալների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով:Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

4. ***Վերնաշապիկ՝ կարճաթև սպիտակ ՌՌ*** **(հատ)**: Պետք է արտադրված լինի 82007, 82039 արտիկուլի սպիտակ գույնի կամ համարժեք կտորից: Վերնաշապիկը բաղկացած է՝ լանջափեշերից, մեջքից, օձիքից և կարճ թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակ օղակով կոճկվող, վերին կենտրոնական ուղղահայաց ծալվածքով և կափույրով վրադիր գրպաններով: Ձախ լանջափեշին ուղղահայաց շերտակարով: Ձախ լանջափեշին վերևից ներքև մշակվում է 2,5-2,7սմ լայնության ուղղահայաց շերտաձող: Մեջքը կոկետկայով, կոկետկայի, կրծքամասի գրպանների և թևքերի մանժետի վերին եզրերը մշակված է կարմիր երիզով, ուղիղ գոտիով, կողամասերը էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը ծալովի, թևերը ներկարված կարճ և շերտակարերով: Օձիքի անկյուններում ներսից տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Ուսադիրների ամրացման համար ուսակարերի շրջանում կամրջակներ և երեք փակօղակներ: Կոճակները ջերմակայուն (չհալող) պլաստմասայից՝ կտորի գույնի: Գրպանների կափույրների կոճակները 14 մմ, մնացածը 11մմ երկու անցքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Օձիքի ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Վերնաշապիկի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Փաթեթավորումը՝ -եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Շեղումները՝ ըստ տեխնիկական պայմանի:

Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը	44	46	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
Վիզը	38	39	40	41	42	43	44	45	46	47	
Հասակը											
2	50	40	30	20	20	10					
3	50	40	40	40	40	50	40	20	20		
4		20	30	30	30	30	40	40	40	40	
5				10	10	10	10	30	30	50	
6							10	10	10	10	
Ընդամենը %	1	2	7	22	25	20	12	7	3	1	100

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-7/9-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Ընդհանուր քանակը 2015-2017թթ. համար	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Ընդհանուր գումարը ՀՀ դրամ	
1	ՀՌՈՒ ՌՈ սպաների,ենթասպաների հանդերձանք					Ապրանքների մատակարարումը կիրականացվի 2015-2017թթ., համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
1	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ երկարաթև/	հատ	3144	6100	19178400	
2	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ կարճաթև/	հատ	3144	5900	18549600	
3	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ/	հատ	750	6100	4575000	
4	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ/	հատ	750	5900	4425000	
Ընդհանուր գումարը		46 728 000 /քառասունվեց միլիոն յոթ հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ				

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-7/9-2 ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Գումարը	
1	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ երկարաթև/	19178400	Նախատեսվում է ֆինանսավորել 2015-2017թթ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետներում
2	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ կարճաթև/	18549600	
3	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ/	4575000	
4	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ/	4425000	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ԲԲԸ

Տնօրեն Ա. ԱՎԱԶԱՍՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-7/9-2 ծածկագրով գնման պայմանագրի

Վաճառող	Գնորդ
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդն՝ ի դեմս _____ և Վաճառողն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Մատակարարումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքն հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 12-ը մարտի 2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 04.02.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի կարագ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ սույն Համաձայանագրի № 2 Հավելվածին համապատասխան:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված № 2-ում և սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 13 776 000 /տասներեք միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան՝ 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2015թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ԲԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Հ.Մարկոսյանի 157
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/հ 900011144079	Հ/Հ 15100023296810100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00803554
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն Ա.ԱԶԱՏՅԱՆ
ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա.ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	2015թ.		
						մարտ	ապրիլ	մայիս
ՀՀ ՋՈՒ ՌՈ սպաների,ենթասպաների հանդերձանք								
1	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ երկարաթև/	հատ	6100	1048	6392800	148	400	500
2	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ կարճաթև/	հատ	5900	1048	6183200	148	400	500
3	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ/	հատ	6100	100	610000	25	75	---
4	վերնաշապիկներ /Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ/	հատ	5900	100	590000	25	75	---
Ընդհանուր գումարը	13 776 000 /տասներեք միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար/ ՀՀ դրամ							

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Հ/հ	Անվանումը	CPV	*Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ամիսների, բայց ոչ ուշ. քան 25.12.2015թ									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	վերնաշապիկներ	18331200/11/4/2	902800	3342800	6392800	6392800	6392800	6392800	6392800	6392800	6392800	6392800
2	վերնաշապիկներ	18331200/12/4/2	873200	3233200	6183200	6183200	6183200	6183200	6183200	6183200	6183200	6183200
3	վերնաշապիկներ	18331200/13/4/2	152500	610000	610000	610000	610000	610000	610000	610000	610000	610000
4	վերնաշապիկներ	18331200/14/4/2	147500	590000	590000	590000	590000	590000	590000	590000	590000	590000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի ղեկավար

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պանաքեռի Կարի Ֆաբրիկա» ԲԲԸ
տնօրեն Լ.ԱՐԱՏՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 6-ը նոյեմբերի 2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Քանաքեռի Կարի Ֆաբրիկա" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 04.02.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի վերնաշապիկ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 8 400 000 /ութ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2015թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Ք. Երևան, Զ. Սարկավագի 157
ՀՀ ֆինանսների նախարարության	«Արարատբանկ» ԲԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1510023294810100
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 00803554
ՀՎՀՀ 00867415	
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2015թ. ըստ եռամսյակների
						4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2015թ.
1	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի	հատ	6 100	700	4 270 000	700
2	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի	հատ	5 900	700	4 130 000	700
Ընդհանուր գումարը՝ 8 400 000 /ութ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ						

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

Չ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ըստ ամիսների ընդ որում՝	
			Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	Վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի	18331200/11/4/2	4 270 000	4 270 000
2	Վերնաշապիկ՝ կարճաթև սև գույնի	18331200/12/4/2	4 130 000	4 130 000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ
Ք. Երևան, Հ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱՉԱՏՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

21. 03. 2016թ.

ք. Երևան

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Քանաքեռի Կարի Ֆաբրիկա" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 04.02.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը, և այն փաստը, որ "Քանաքեռի Կարի Ֆաբրիկա" ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված 936 հատ վերնաշապիկ երկարաթև ՌՈ, 936 հատ վերնաշապիկ կարճաթև ՌՈ, 460 հատ վերնաշապիկ երկարաթև ՌՈ սպիտակ, 460 հատ վերնաշապիկ կարճաթև ՌՈ սպիտակ մասով առաջարկված միավորի գները նվազեցնել համապատասխանաբար՝ 6000 ՀՀ դրամի, 5800 ՀՀ դրամի, 6000 ՀՀ դրամի, 5800 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի վերնաշապիկ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **16 472 800 (տասնվեց միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Զ. Սարկավագի 157
աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00803554
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ եռամսյակների 2016թ.		
						մարտ	ապրիլ	մայիս
ՀՀ ՋՈՒ ՌՈ սպաների, ենթասպաների հանդերձանք								
1	Վերնաշապիկ երկարաթև	հատ	936	6000	5616000	468	468	
2	Վերնաշապիկ կարճաթև	հատ	936	5800	5428800		468	468
3	Վերնաշապիկ երկարաթև, սպիտակ	հատ	460	6000	2760000		230	230
4	Վերնաշապիկ կարճաթև, սպիտակ	հատ	460	5800	2668000		230	230
Ընդամենը	16 472 800 (տասնվեց միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ							

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ կենտրոնական իրային բազա ք.Երևան:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐՋԱԲԵԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ									
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Վերնաշապիկ երկարաթև	18331200/10/4/2	2808000	5616000	5616000	5616000	5616000	5616000	5616000	5616000	5616000	5616000
2	Վերնաշապիկ կարճաթև	18331200/11/4/2		2714400	5428800	5428800	5428800	5428800	5428800	5428800	5428800	5428800
3	Վերնաշապիկ երկարաթև, սպիտակ	18331200/12/4/2		1380000	2760000	2760000	2760000	2760000	2760000	2760000	2760000	2760000
4	Վերնաշապիկ կարճաթև, սպիտակ	18331200/13/4/2		1334000	2668000	2668000	2668000	2668000	2668000	2668000	2668000	2668000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄՈՒՇԵՂԵՎՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ԲԲԸ
ք. Երևան, Հ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 4
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30. 01. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Քանաքեռի Կարի Ֆաբրիկա" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 04.02.2015թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը, և այն փաստը, որ "Քանաքեռի Կարի Ֆաբրիկա" ՍՊԸ-ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված «վերնաշապիկ երկարաթև», «վերնաշապիկ կարճաթև», «վերնաշապիկ երկարաթև սպիտակ», «վերնաշապիկ կարճաթև սպիտակ» ապրանքատեսակների առաջարկված միավորի գները նվազեցնել համապատասխանաբար՝ 5950 ՀՀ դրամի, 5750 ՀՀ դրամի, 5950 ՀՀ դրամի, 5750 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի վերնաշապիկ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **7 605 000 (յոթ միլիոն վեց հարյուր հինգ հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր հրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Զ. Սարկավագի 157
աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00803554
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի N 4 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2017թ.	
						մայիս	հունիս
ՀՀ ՋՈՒ ՌՈ սպաների, ենթասպաների հանդերձանք							
1	Վերնաշապիկ երկարաթև	հատ	460	5950	2737000	250	210
2	Վերնաշապիկ կարճաթև	հատ	460	5750	2645000	250	210
3	Վերնաշապիկ երկարաթև, սպիտակ	հատ	190	5950	1130500	100	90
4	Վերնաշապիկ կարճաթև, սպիտակ	հատ	190	5750	1092500	100	90
Ընդամենը	7 605 000 (յոթ միլիոն վեց հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ						

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/9-2 գնման պայմանագրի N 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ							
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Վերնաշապիկ երկարաթև	18331200/10/4/2	1487500	2737000	2737000	2737000	2737000	2737000	2737000	2737000
2	Վերնաշապիկ կարճաթև	18331200/11/4/2	1437500	2645000	2645000	2645000	2645000	2645000	2645000	2645000
3	Վերնաշապիկ երկարաթև, սպիտակ	18331200/12/4/2	595000	1130500	1130500	1130500	1130500	1130500	1130500	1130500
4	Վերնաշապիկ կարճաթև, սպիտակ	18331200/13/4/2	575000	1092500	1092500	1092500	1092500	1092500	1092500	1092500

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի Կարի Ֆաբրիկա» ԲԲԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ